

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2022

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Աշխարհագրական թաղանթի համեմատաբար ոչ մեծ տարածք զբաղեցնող տեղամասերը՝ բնատարածքային համալիրները, դրանց առաջացումը, կառուցվածքը և փոփոխություններն ուսումնասիրող գիտություն է.

- 1) կլիմայագիտությունը
- 2) լանդշաֆտագիտությունը
- 3) երկրաձևաբանությունը
- 4) հնեաշխարհագրությունը

2

Տեղանքում կարելի է կողմնորոշվել ծառերի.

- 1) տարեկան օղակներով
- 2) տերևների գույնով
- 3) արմատներով
- 4) տերևների մեծությամբ

3

Հորիզոնի n° կողմի ազիմուտն է 90° :

- 1) արևելյան
- 2) հյուսիսային
- 3) արևմտյան
- 4) հարավային

4

Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Հատակագիծը պատկերում է մեծ տարածք:
- 2) Հատակագիծը չունի միջօրեականներ և զուգահեռականներ:
- 3) Հատակագծում ռելիեֆը պատկերվում է իզոբարերի օգնությամբ:
- 4) Հատակագիծն ունի միջին մասշտաբ:

5

Բնութագրումով որոշել վարկածը.

Ելակետ ընդունելով այդ վարկածը՝ գիտնականները եզրակացնում են, որ Երկրի վրա կուտակված հսկայածավալ ջուրն արտահոսել է ընդերքից, Երկրի տաքացումը՝ սկսվել կենտրոնից: Ո՞րն է այդ վարկածը

- 1) երկնաքարային
- 2) պատահարային
- 3) խորքային գրավիտացիոն
- 4) միգամածային

6


Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Միջօրեականի վրա տվյալ պահին դիտված ժամանակը կոչվում է դեկրետային ժամանակ:
- 2) Ամսաթվի փոփոխման գիծն անցնում է գլխավոր միջօրեականով:
- 3) Տոկիոյի գոտիական ժամանակն առաջ է Երևանի գոտիական ժամանակից:
- 4) Օրվա նույն ժամը կարող է լինել միայն նույն գուգահեռականի վրա:

7


Նկար 1-ում ո՞ր տառով է նշված հրաբխի խառնարանը:

- 1) Բ
- 2) Գ
- 3) Դ
- 4) Ա



8

Նկար 2-ում ո՞ր հարթավայրն է նշված Ա տառով:




Նկար 2

- 1) բարձրավայր
- 2) ցածրավայր
- 3) դաշտավայր
- 4) սարահարթ

9

Ո՞ր քամիներն են պատկերված նկար 3-ում:

- 1) մուսսոններ
- 2) պասսատներ
- 3) լեռնահովտային քամիներ
- 4) բրիզներ




Նկար 3

10

Նկար 4-ում n° թվով է նշված օդի ջերմաստիճանի տարեկան ընթացքի կորը հասարակածային լայնություններում:

- 1) 2
- 2) 3
- 3) 4
- 4) 1



Նկար 4

11

Համաշխարհային օվկիանոսի վերաբերյալ n° պնդումն է ճիշտ:

- 1) Առավել մեծ աղիություն ունեն հասարակածային գոտու ջրերը:
- 2) Ցունամիի առաջացման հիմնական պատճառը մշտական ուղղություն ունեցող քամիներն են:
- 3) Լուսնի ձգողական ուժի հետևանքով օրական երկու անգամ օվկիանոսի ջրի մակարդակի իջեցումը կոչվում է տեղատվություն:
- 4) Օվկիանոսի այն հատվածը, որը ներթափանցել է ցամաքի մեջ, կոչվում է նեղուց:

12

Գետի ակունքի բացարձակ բարձրությունը 2200 մ է, գետաբերանինը՝ 1000 մ, երկարությունը՝ 150 կմ: Գետի թեքությունը կլինի.

- 1) 6 մ/կմ
- 2) 15 մ/կմ
- 3) 8 մ/կմ
- 4) 12 մ/կմ

13

Աշխարհագրական թաղանթը մթնոլորտում տարածվում է.

- 1) մինչև վերնոլորտ
- 2) մինչև օզոնի շերտ
- 3) մինչև ջերմոլորտ
- 4) մինչև ներքնոլորտ

14


Մեկ խորանարդ մետր օդում պարունակվող ջրային գոլորշիների քանակը՝ արտահայտված գրամներով, կոչվում է.

- 1) հարաբերական խոնավություն
- 2) չհագեցած օդ
- 3) բացարձակ խոնավություն
- 4) հագեցած օդ

15

Նկար 5-ում n° թվով է պատկերված միջերկրածովային մշտականաչ կոշտատերև անտառների և թփուտների զոնան:

- 1) Բ
- 2) Գ
- 3) Դ
- 4) Ա



16

Մավանաների բնական զոնան հիմնականում n° ը հողերի վրա է տարածվում:

- 1) կարմրագորշ
- 2) պոդզոլային
- 3) դարչնագույն
- 4) լատերիտային

17


Քարտեզ 1-ում Դ տառով n° ը ծովային հոսանքն է նշված:

- 1) Հյուսիսատլանտյան
- 2) Օյասիո
- 3) Հարավպասսատային
- 4) Կուրոսիո

18

Քարտեզ 1-ում L տառով n° նավահանգիստն է նշված:

- 1) Կարաչի
- 2) Ադեն
- 3) Մումբայ
- 4) Չենայ



Քարտեզ 1

19

Աֆրիկայի վերաբերյալ պնդումներից n° ըն է ճիշտ:

- 1) Կլիման ձևավորող գլխավոր գործոնը ռելիեֆն է:
- 2) Մայրցամաքի վրա ձևավորվում է մթնոլորտային ճնշման չորս մարզ՝ երկու բարձր, երկու ցածր:
- 3) Կանարյան սառը հոսանքը մեծ դեր է խաղացել Սահարա անապատի առաջացման գործում:
- 4) Արևմուտքում գտնվող Կամերուն գործող հրաբուխը մայրցամաքի ամենախոնավ շրջանն է:

20

Ω ը գետը դելտա չի առաջացնում:

- 1) Կոնգո
- 2) Նեղոս
- 3) Նիգեր
- 4) Օրանժ

21 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հյուսիսային Ամերիկյան Գրենլանդիայից բաժանվում է Բերինգի նեղուցով:
- 2) Հյուսիսային Ամերիկայում Միսսուրի գետը հորդանում է ձմռանը:
- 3) Հյուսիսային Ամերիկայում ամենամեծ տարածում ունի անապատների և կիսաանապատների զոնան:
- 4) Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային մասի մակերևույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել սառցադաշտերը:

22 Հյուսիսային Ամերիկայում չեն ապրում.

- 1) կարիբոն ու խոյացուլը
- 2) սպիտակ արջն ու լեմինգը
- 3) որմզդեղն ու բիզոնը
- 4) լաման ու նանդու ջայլամը

23 Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Բրազիլական և Գվիանական սարահարթերի հնագույն հիմքի բյուրեղային ապարները հարուստ են երկաթի և մանգանի պաշարներով:
- 2) Կարիբյան ծովի ափերին կան նավթի հարուստ պաշարներ:
- 3) Լա Պլատայի դաշտավայրը շատ հարուստ է ոսկու պաշարներով:
- 4) Անդերը հարուստ է հատկապես պղնձի պաշարներով:

24 Ո՞ր գետը Հարավային Ամերիկայում չէ:

- 1) Հուանիե
- 2) Պարանա
- 3) Օրինոկո
- 4) Ամազոն

25 Ո՞ր ծովը Ավստրալիայի ափերը չի ողողում:

- 1) Կորալյան
- 2) Թասմանի
- 3) Արաֆուրյան
- 4) Բաֆինի

26

Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Անտարկտիդային ամենամոտ մայրցամաքը Հարավային Ամերիկան է:
- 2) Ատարկտիդան ամբողջությամբ ընկած է հարավային բևեռային շրջագծի և Հարավային բևեռի միջև:
- 3) Անտարկտիդան Հրո երկիր կղզեխմբից բաժանվում է Դրեյկի լայն ու փոթորկոտ նեղուցով:
- 4) Անտարկտիկան մայրցամաք է, իսկ Անտարկտիդան՝ աշխարհամաս:

27

Քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի երկրորդ փուլի կարևոր իրադարձությունն է.

- 1) ԽՍՀՄ-ի կազմավորումը
- 2) ԱՄՆ-ի կազմավորումը
- 3) ԽՍՀՄ-ի փլուզումը
- 4) ՆԱՏՕ-ի և ՎՊԵ-ի ստեղծումը

28

Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Լեռնագրական սահմանները գլխավորապես անցնում են բնական սահմաններով, հիմնականում՝ լեռնաշղթաներով ու գետերի հունով:
- 2) Երկրաչափական սահմանն ուղիղ գիծ է, որը միացնում է պետական սահմանի որոշակի կետեր՝ առանց հաշվի առնելու տեղանքի ռելիեֆային պայմանները:
- 3) Աշխարհագրական (աստղագիտական) սահմանը կարող է համընկնել այս կամ այն միջօրեականի կամ գուգահեռականի հետ:
- 4) Սահմանարկումը տեղանքում պետական սահմանի անցկացումն է, նրա աշխարհագրական կոորդինատների որոշումը, սահմանանշանների միջոցով սահմանագծի անցկացումը:

29

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Միասնական պետության վարչատարածքային միավորներն ունեն որոշակի քաղաքական ինքնավարություն:
- 2) Խորհրդարանական հանրապետությունում երկրի նախագահն ընտրվում է ոչ թե ժողովրդի, այլ խորհրդարանի կողմից:
- 3) Աշխարհի երկրների ճնշող մեծամասնության վարչատարածքային կառուցվածքը դաշնային է:
- 4) Միապետություններում երկրի օրենսդիր ու գործադիր իշխանությունների գործունեությունը ղեկավարում է նախագահը:

30

Ընտրել պետությունների ճիշտ շարքն՝ ըստ դրանց տարածքի մակերեսի աճման հաջորդականության.

- 1) ԱՄՆ, Չինաստան, Կանադա, Ռուսաստան
- 2) Հնդկաստան, Բրազիլիա, Ավստրալիա, Կանադա
- 3) Կանադա, Չինաստան, ԱՄՆ, Բրազիլիա
- 4) Բրազիլիա, Ավստրալիա, Սուդան, Ղազախստան

31 Ո՞ր երկիրն ունի 100 մլն-ից պակաս բնակիչ

- 1) Գերմանիա
- 2) Հնդկաստան
- 3) Ճապոնիա
- 4) Պակիստան

32 Բնակչության շարժի հետևանքով սերունդների հերթափոխման գործընթացը կոչվում է.

- 1) բնակչության բնական աճ
- 2) բնակչության վերարտադրություն
- 3) բնակչության մեխանիկական շարժ
- 4) բնակչության կազմ

33 Կյանքի միջին տևողությունը առավելապես պայմանավորված չէ.

- 1) բուժսպասարկման մակարդակով
- 2) միգրացիայի ինտենսիվությամբ
- 3) բարձր մահացությամբ
- 4) բնակչության ցածր կենսամակարդակով

34 Հնդկվրոպական լեզվաընտանիքի լեզվախումբ է.

- 1) թուրքականը
- 2) սեմականը
- 3) իրանականը
- 4) չինականը

35 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ծանր գունավոր մետաղների ձուլումը կողմնորոշվում է դեպի հումքի բազաները:
- 2) Պողպատի ձուլման ձեռնարկությունները կառուցվում են գիտական կենտրոնների մոտ:
- 3) Ջրաէլեկտրակայանները հիմնականում կառուցվում են հարթավայրային գետերի վրա:
- 4) Աէկներն ապահովում են աշխարհում արտադրվող էլեկտրաէներգիայի կեսից ավելին:

36 Նյութական արտադրության ո՞ր ճյուղն է առավել աշխատատար ու գիտատար և տեղաբաշխված խոշոր քաղաքներում:

- 1) էլեկտրաէներգետիկա
- 2) սննդի արդյունաբերություն
- 3) մեքենաշինություն
- 4) վառելիքի արդյունահանում

37

«Հանքավայր-հանքատեսակ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Մագադան-գագ
- 2) Նորիլսկ-երկաթ
- 3) Սամոտլոր-նավթ
- 4) Սուրգուտ-ածուխ

38

Ընտրել «պետություն-մայրաքաղաք» համապատասխանությունների ճիշտ շարքը:

- | | |
|--------------|---------------|
| 1. Ուկրաինա | ա. Բրատիսլավա |
| 2. Բուլղարիա | բ. Սոֆիա |
| 3. Սլովակիա | գ. Բուխարեստ |
| 4. Ռումինիա | դ. Կիև |

- 1) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
- 2) 1-դ, 2-բ, 3-ա, 4- գ
- 3) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
- 4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ

39

Կենտրոնական Ասիայի տրված պետություններից ո՞րը չունի սահման Չինաստանի հետ:

- 1) Տաջիկստան
- 2) Ղազախստան
- 3) Ղրղզստան
- 4) Ուզբեկստան

40

«Մշակաբույս-մշակող առաջատար երկիր» գույգերից ընտրել ճիշտը:

- 1) մանիոկ-Նիգերիա
- 2) սուրճ-Մարոկկո
- 3) կակաո-Ալժիր
- 4) գետնանուշ-Թունիս

41

Ո՞ր կղզեխումբն է գտնվում Օվկիանիայում:

- 1) Պոլինեզիա
- 2) Ճապոնական
- 3) Կուրիլյան
- 4) Ֆիլիպիններ


42

Ո՞ր քաղաքն է ԱՄՆ-ի ավտոմոբիլաշինության գլխավոր կենտրոնը:

- 1) Դեթրոյթ
- 2) Նյու Յորք
- 3) Հյուսթոն
- 4) Լոս Անջելես

43 Լատինական Ամերիկայում խոշոր եղջերավոր անասնապահության զարգացմամբ ո՞ր երկիրն է առաջատար:

- 1) Արգենտինա
- 2) Ուրուգվայ
- 3) Վենեսուելա
- 4) Պարագվայ



Քարտեզ 2

44 Քարտեզ 2-ում Արփա գետը ո՞ր տառով է նշված.

- 1) Բ
- 2) Դ
- 3) Ը
- 4) Է

45 Քարտեզ 2-ում Արագածոտնի մարզը ո՞ր տառով է նշված.

- 1) Ա
- 2) Գ
- 3) Ե
- 4) Զ

46

Լեռնագրական ո՞ր մարզը Միջնաշխարհի մեջ չի մտնում.

- 1) Հայկական հրաբխային բարձրավանդակ
- 2) Ներքին Տավրոս
- 3) միջլեռնային գոգավորություններ
- 4) Փոքր Կովկաս

47

ՀՀ Լոռու մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Քաղաքների թվով հանրապետությունում առաջինն է՝ ութ քաղաք:
- 2) Ամենացածրադիր քաղաքը Վանաձորն է:
- 3) Ամենափոքր քաղաքը Տաշիրն է:
- 4) Բնակչության թվաքանակով զիջում է միայն Սյունիքի մարզին:

48

Արդյունաբերական հանգույցներ են եղել.

- 1) Սևան և Գավառ
- 2) Գյումրի և Վանաձոր
- 3) Միսիան և Գորիս
- 4) Մարտունի և Վարդենիս

49

Սյունիքի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հարավում տարածվում են աղուտներ:
- 2) Հողաբուսական ծածկույթը ենթարկվում է վերընթաց գոտիականության:
- 3) Հողածածկույթում բացակայում են լեռնային սևահողերը:
- 4) Հողածածկույթում տիրապետում են կիսաանապատային գորշ հողերը:

50

ԼՂՀ –ի (Արցախի Հանրապետություն) վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Թզենին և նոնենին առավել լավ հարմարվել են ցածրադիր շրջաններին:
- 2) Խաղողագործությունն առավել զարգացած է նախալեռնային գոտում:
- 3) Տեխնիկական մշակաբույսերից առավել տարածված է շաքարի ճակնդեղը:
- 4) Գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են հացահատիկի մշակությունն ու այգեգործությունը:

51

Բնական և մարդածին այն օբյեկտները, որոնք ունեն եզակիություն, պատմական կամ գեղարվեստական արժեք, գեղագիտական գրավչություն, առողջարարական-կազդուրիչ նշանակություն և կարող են օգտագործվել հանգստի ու զբոսաշրջության կազմակերպման համար, կոչվում են.

- 1) ռեկրեացիոն ռեսուրսներ
- 2) հանքային ռեսուրսներ
- 3) կենսաբանական ռեսուրսներ
- 4) հողային ռեսուրսներ

52

ՀՀ մարմարի հետախուզված պաշարները կազմում են մոտ 21 մլն մ³, իսկ բնակչության թիվը՝ 3,2 մլն մարդ (2001 թ.): Մոտավորապես որքա՞ն կկազմի ռեսուրսաապահովվածությունը 1 բնակչի հաշվով:

- 1) 6,6 մ³/մարդ
- 2) 7,2 մ³/մարդ
- 3) 8,4 մ³/մարդ
- 4) 5,7 մ³/մարդ

53

Շրջակա միջավայրի վրա առավել շատ բացասական ազդեցություն է թողնում.

- 1) սարքաշինությունը
- 2) կոնյակի արտադրությունը
- 3) պղնձաձուլությունը
- 4) կարի արտադրությունը

54

Կենդանիների պահպանության միջոցառում է.

- 1) ճահիճների և ճահճակալած հողերի չորացումը
- 2) կլիմայավարժեցումը
- 3) առաջավոր ագրոտեխնիկայի կիրառումը
- 4) արոտաշրջանառությունը

55

Ո՞ր պնդումն է ճիշտ

- 1) Օդում մեծ քանակությամբ փոշու առկայության պատճառով խոշոր քաղաքներում օդի ջերմաստիճանն ավելի ցածր է, քան դրանցից դուրս:
- 2) Թթվային անձրևների առաջացման միակ պատճառը Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթներն են:
- 3) Օզոնային շերտի քայքայումը բնորոշ է միայն բարեխառն գոտուն:
- 4) Ջերմոցային էֆեկտը պայմանավորված է մթնոլորտում մեթանի և ածխաթթու գազի քանակի ավելացմամբ:

56

Տրված են աշխարհի նշանավոր լճեր: Գրել սառցադաշտային ծագում ունեցող լճերը

- | | |
|-------------|-------------------|
| 1) Մեոյալ | 5) Իսիկ Կուլ |
| 2) Մեծ արջի | 6) Վեներն |
| 3) Ինարի | 7) Մեծ աղի |
| 4) Կասպից | 8) Մեծ ստրուկների |

57) Գրել այն երկրների համարները, որոնք ներգամաքային են (ելք չունեն դեպի ծով)։

- | | |
|------------|-------------|
| 1) Մեքսիկա | 5) Չադ |
| 2) Ավստրիա | 6) Պերու |
| 3) Լիբանան | 7) Չեխիա |
| 4) Եգիպտոս | 8) Պարագվայ |

58) Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են ոչխարաբուծությամբ։

- | | |
|-------------|-----------------|
| 1) Ուկրաինա | 5) Գերմանիա |
| 2) Լեհաստան | 6) Նոր Զելանդիա |
| 3) Ճապոնիա | 7) Իրան |
| 4) Կանադա | 8) Արգենտինա |

59) Գրել այն երկրների համարները, որոնք թերակղզային են։

- | | |
|--------------------|----------------|
| 1) Իտալիա | 5) Ճապոնիա |
| 2) Ֆրանսիա | 6) Նիգերիա |
| 3) Սաուդյան Արաբիա | 7) Պորտուգալիա |
| 4) Արգենտինա | 8) Կոլումբիա |

60) Գրել այն երկրների համարները, որոնք ունեն անցումային տնտեսություն։

- | | |
|--------------|--------------|
| 1) Մոլդովա | 5) Բուլղարիա |
| 2) Իրաք | 6) Ավստրիա |
| 3) Բրազիլիա | 7) Դանիա |
| 4) Հունաստան | 8) Թուրքիա |

61) Գրել այն ջրէկների համարները, որոնք չեն մտնում Սևան-Հրազդան կասկադի մեջ։

- | | |
|-------------|------------|
| 1) Սևանի | 5) Տաթևի |
| 2) Արզնիի | 6) Արզելի |
| 3) Շամբի | 7) Երևանի |
| 4) Քանաքեռի | 8) Այրումի |

62) Արաքսի ձախակողմյան տրված վտակների համարները դասավորել դրանց ջրառատության նվազման կարգով։

- | | | |
|------------|---------|-------------|
| 1) Հրազդան | 2) Արփա | 3) Ախուրյան |
|------------|---------|-------------|

63 ՀՀ տրված լճերի համարները դասավորել հյուսիսից հարավ հաջորդականությամբ.

- 1) Քարի 2) Սև 3) Արփի

(64-65) Աշտարակ քաղաքում օրվա ընթացքում չափել են օդի ջերմաստիճանը և ստացել են -1° , -4° , -6° , -2° , $+7^{\circ}$, $+16^{\circ}$, $+10^{\circ}$, $+4^{\circ}$ C° ցուցանիշները:

64 Որոշել օդի ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը (ամպլիտուդ):

65 Որոշել օդի օրական միջին ջերմաստիճանը:

66 Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս.լ. $35^{\circ}30'$ և արմ.ե. 80° :
Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը դեկտեմբերի 22-ի կեսօրին:

67

Որոշել միևնույն միջօրեականի վրա գտնվող երկու կետերի միջև հեռավորությունը (կմ-ով), եթե դրանցից մեկը հս.լ. 18°-ի վրա է, իսկ մյուսը՝ հվ. լ. 35°-ի:

68

Երկրի բնակչության թիվը 4,8 մլն մարդ է, բնակչության միջին խտությունը՝ 60 մարդ/կմ²: Որքա՞ն է երկրի տարածքի մակերեսը:

69

Մեծ Բրիտանիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Էլեկտրաէներգիայի մեծ մասը բաժին է ընկնում աեկներին:
- 2) Արդյունաբերության ավանդական ճյուղերից է թեթև արդյունաբերությունը:
- 3) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 4) ՀՆԱ-ի մեծությամբ առաջինն է Հյուսիսային Եվրոպա տարածաշրջանում:
- 5) Տնտեսությունը զարգացման ինդուստրիալ փուլում է:
- 6) Հարուստ է նավթի պաշարներով:

70

ՀՀ Շիրակի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) ՀՀ շաքարի միակ գործարանը Ախուրյանում է:
- 2) Շիրակի դաշտը ՀՀ-ում ծխախոտի մշակության գլխավոր շրջաններից է:
- 3) Մարզի ընդերքում կան պեմզայի, տուֆի և գորշ ավազի պաշարներ:
- 4) ՀՀ խաղողագործական չորս շրջաններից մեկն է:
- 5) Խոզաբուծությունը թույլ է զարգացած:
- 6) Թեթև արդյունաբերության ենթաճյուղերից առավել զարգացած է տեքստիլը: